


մարդիկ միայն ներս առնուած են, շատ կա-
րելոր կէտ մը կը ցուցնէ. հասակի տարածու-
թեան անջրպետը չափազանց մեծ է՝ 150—189
հրգմ., ուր միջին բարձրութիւնն է իբր 167—

բերութեան գումարը կը գտնէր 35.7 հրգմ.,
մինչ Գուրտերու քով 25.8, եւ կը հարցնէր.
«Արդեօք այս նշան մը չէ՞, որ Հայերն աւելի
խառնուած են». նոյնպէս հասակի գծադրական



168 հրգմ. ինչպէս Ջաւախի շրջանի եւ Շանտրի
չափերը ցոյց տուին: Բայց այն միջին բար-
ձրութեան համեմատութեամբ՝ երկու եզր-
ները շատ հեռու կ'իյնան իրարմէ, որոնց գու-
մարը կու տայ 37 հրգմ.-ի տարբերակ մը: Պի-
տար իւր չափած 76 հայերու միեւնոյն տար-

պականերին անկանոնութիւններն իրեն ցեղային
խառնուրդի մը արդիւնքը կ'երեւան: Անու-
շինի¹⁴ համաձայն նման խառնուրդ մը կ'ուզէ
տեսնել նաեւ Պանտիւխով նկատի առնելով
¹⁴ Հայերը մարդարանական եւ աշխարհագրական
տեսակէտից, Արարատ, 1899, էջ 39:

Հայոց հասակի չափերը. կ'ըսէ՝ հասակի մե-
ծութեան թիւերը «համախմբուած են ոչ թէ
միայն միջին հասակի վերաբերութեամբ. այլ
զէպի աւելի ցածր եւ աւելի բարձր հասակ-
ներն, ուր կարծես ակնարկուած է երկու հա-
սակով տարբեր ցեղերի խառնուրդի վրայ»:
Մեր տախտակը կ'արդարացնէ ուսու մարդա-
խօսին վարկածը եւ կը զօրացնէ զայն. եթէ
հնարաւոր ըլլար իւրաքանչիւր հայկական գա-
ւառի մէջ յօրինուածական խուզարկութիւն-
ներ ընել, ստուգիւ աւելի ցայտուն պիտի
երեւար մարմնական յատկանիշներու այդ բա-
ժանուած. Շանտրի իւր կատարած դնութիւն-
ներու վրայէն կը հաւատալ թէ Հայոց հասակը
ամէնէն փոփոխական հասակներէն է:

Իրան եւ բազկատարած: Իրանի մեծու-
թիւնը բնականաբար սերտ կապուած է հասա-
կին հետ, բայց երկուքին համեմատականու-
թիւնը սովորաբար յատկանշական ծանուցիչ
կը նկատուի, վասն զի այդ տեսակէտէ՝ ցե-
ղերու զէթ ընդհանուր գծով տարբերութիւն
մը կը տեսնուի: Նկատուած է որ եւրոպական
ժողովուրդներու իրանը աւելի փոքր համե-
մատութիւն մը կը ցուցնէ քան ասիական մա-
նաւանդ մոնղոլակերպներունը: Բունը իբր
հոմանիշ գերմ. Stamm, Փր. tronc բառին՝
կը նշանակէ թիկնոսկրէն մինչեւ նստասեղի
հեռաւորութիւնը. իսկ իրանը (Rumpf, buste)
կը չափուի կրծոսկրի վերի ծայրէն մինչեւ
կոնքոսկրի յտառաշաղկարկաւ երկու բազուկ-
ները:

Հայոց բունը հասակի համեմատութեամբ
մեծ է. Մարտին¹⁵ կը գնէ 53.6, մեր չափերը
կու տան 53.3, Պիտար¹⁶ 53.15, որուն կը
համապատասխանէ իբր բացարձակ մեծու-
թիւն՝ 86.9 հրգմ., Անսերով՝ Նոր-Նախի-
ջեւանցիներու համար՝ 52.9 կը նշանակէ¹⁷.
Համա. հիւսիսային Ֆրանսացիին՝ 52.3, Բել-
զիացիին՝ 52.2: Նոյնպիսի համեմատութիւն մը
կը գտնենք իրանի համար ալ. Ջաւախի շրջ-
անի¹⁸, որ փոխանակ կրծոսկրէն չափելու չա-
փած է թիկնոսկրէն՝ կը գնէ 35.5 (համեմա-
տութիւն իրանի՝ հասակին հետ), ուր 4%
փոքր, 33% միջակ, 63% մեծ իրան ունին.
Մարտին¹⁹ կը նշանակէ 30.2: Երկուքին միջեւ
եղած տարբերութիւնն արդիւնքն է չափելու

տարբեր մեթոտին. սակայն մեծ նշանակու-
թիւն մը չունի այդ պարագան, վասն զի հա-
մեմատութեան տախտակները կը ցուցնեն թէ
Հայերը մեծ բուն եւ մեծ իրան ունեցող ժո-
ղովուրդներու կարգէն են: Կուրծքի տարա-
ծութիւնն եւ ուսերու երկայնութիւնը թէեւ
մարդախօսական տեսակէտէ մեծ դեր մը չեն
խաղար, սակայն ամբողջութեան համար յա-
ռաջ կը բերենք հոս վրացի մարդախօսին²⁰
չափերը. 363 հոգւոյ քով կուրծքի տարածու-
թեան իբր միջին գտած է 87.4 հրգմ., որ հա-
սակի համեմատութեամբ կու տայ 52.7 իբր
ցուցիչ (Ֆրանսացիներու եւ Լեհերու 53.7).
Իսկ 103 հայերու ուսերու երկայնութիւնը կը
գտնէ 40.2 հրգմ., որուն կը համապատաս-
խանէ հասակի համեմատութեամբ՝ 23.9 իբր
ցուցիչ:

Հասակի եւ բազուկներու մեծութիւնը
համեմատական է, սակայն այդ համեմատու-
թեան մէջ կրկին երեւան կ'ելլէ ցեղային ծա-
նուցիչ մը, թէեւ երկրորդական արժէքով:
Շանտրի²¹ ժամանակի ըմբռնման համեմատ
չափ մեծ կարեւորութիւն տուած է Հայոց
բազկատարածի մեծութեան, բայց արդի ուղ-
ղութիւնը աւելի սիրով կը խուզարկէ բազուկի
յոգածոյ մասերը, քանի որ անոնցմէ կախում
ունի բազկատարածի երկայնութիւնը: Ամէն
պարագային իբր մարմնակազմութեան մաս
չհեկան ծանօթութիւն է Շանտրի ուսումնա-
սիրութիւնը, որուն համաձայն բազկատա-
րածը «Հայոց քով մեծ է, վասն զի սակայ 170
հրգմ. կ'անցնի. չափուած 249 հայերէն 148
այդպէս էր». իբր միջին մեծութիւն կը գտնէ
169 հրգմ. հետեւեալ բաժանումով՝ 21% հա-
սակէս փոքր, 10% համաչափ, 69% հասակէն
բարձր: Այս տարբերութիւնն ալ գաւառա-
կան երեւոյթ մ'ունի: Է. Պիտար²² եւս կը
գնէ իբր միջին 161 հրգմ., որուն հասակին
հետ համեմատութիւնը կու տայ 103.35, այս-
ինքն հասակէն բարձր. նոյնպէս Էրիքսոն²³
176.2 հրգմ., հասակի համեմատութեամբ
103.65: Ջաւախի շրջանի²⁴ մարմնոյ ծայրան-
դամներն ըստ արդի ուղղութեան յօդուած-
ներու համաձայն չափած է. 208 հայերու բա-
զուկի երկայնութիւնը կը նշանակէ 75.3 հրգմ.,

¹⁵ R. Martin, Lehrbuch der Anthropologie,
p. 260.
¹⁶ Bull. soc. sciences, p. 347.
¹⁷ Journ. Russe, 1926, p. 32.
¹⁸ Arch. f. Anthr., 1925, p. 86—87.
¹⁹ Lehrbuch, p. 262.

²⁰ Arch. f. Anthr., 1925, p. 86—87.
²¹ Recherches anthr., 1895, p. 46—47.
²² Bull. soc. sciences, 1912, p. 350.
²³ Journ. russe d'Anthr., 1907, p. 178.
²⁴ Arch. f. Anthr., 1925, p. 86—87. տես նաեւ
Էրիքսոնի չափերը Journ. Russe Anthr., 1907, p.
177—179.

